ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ № 1, 1951 *Общественные науки*

Նաճումյան

ԹԱԹՈՒԼ ՀՈՒՐՅԱՆ

Թաթուլ Հուրյանը սովետական երիտասարդ գրական սերնդի տաղանդավոր ներկայացուցիչներից մեկն է։ Նրա ինքնատիպ և կենսունակ տաղանդը կարճ ժամանակամիջոցում ստեղծել է գաղափարապես հագեցված, արվեստի նորանոր ձևերով հարուստ ստեղծագործություններ։

Թ. Հուրյանը (Խաչատրյան) ծնվել է 1912 թ. Տաճկաստանում՝ հայ չքավոր գյուղացու ընտանիքում։ 1914 թ. պատերազմի տարիներին նրա ծնողները գաղթում են Հայաստան, հաստատվում Էջմիածնի գավառի Էվջիլար գյուղում։ Սովետական կարգերի հաստատումից հետո նրանց ընտանիքը տեղափոխվում է Բաքու։

Հուրյանը բանաստեղծություններ է գրել աշակերտական տարիներից։ Նրա առաջին ժողովածուն լույս է տեսել 1932 թվին «Հողի արյունը» վերնագրով։ Դրան հաջորդում է «Հասակ» վերնագիրը կրող բանաստեղծությունների ժողովածուն՝ 1934 թ.։ Այնուհետև նա գրում է «Սայաթ-Նովա» պոեմը և «Ֆրիկ» դրամատիկական պոեմը։ 1941-ին հրապարակվում է Թ. Հուրյանի պոեմների ժողովածուն։

Հայրենական պատերազմի առաջին օրերին բանաստեղծը մեկնում է ռազմաճակատ, պաշտպանելու իր հայրենիքի ազատությունը և անկախությունը։

1942 թվի հունիսի 20-ին Սևաստոպոլի պաշտպանության դիրքերում հերոսի մահով ընկնում է Թաթուլ Հուրյանը։ Հայրենիքի համար ընկած հերոսը հետմահու պարգևատրվում է Կարմիր Դրոշի շքանշանով։

* * *

Թաթուլ Հուրյանի առաջին շրջանի բանաստեղծությունները զետեղված են «Հողի արյունը» վերնագիրը կրող ժողովածուի մեջ. դրանք բացահայտում են բանաստեղծի փայլուն տաղանդը և նրա գաղափարական աճը սոցիալիզմի հաղթանակի և նրա կառուցման տարիներին։

Բանաստեղծությունների առաջին շարքը կրում է «Մուրճերի հաղթական երգը» վերնագիրը։ Այդ բանաստեղծությունները նվիրված են սոցիալիստական շինարարությանը. Հուրյանը ձգտել է բացահայտել սովետական մարդու ուժեղ կամքը՝ դժվարությունները հաղթահարելու և նորը հաստատելու գործում։

Բանաստեղծի վերապրումները ավելի ընդգծված երևան են գալիս նրա «Քանդումը», «Մովի նահանջը», «Երգ էնտուզիաստների մասին» բանաստեղծությունների մեջ։

Սակայն պետք է նկատել, որ առաջին շրջանի բանաստեղծությունների մեջ դեռևս անբավարար է նկարագրվող երևույթների էությունն բացահայտումը։

«Կառուցողական» վերնագիրը կրող բանաստեղծության մեջ նոր կյանքի ստեղծման պրոցեսն արտացոլող գեղարվեստական պատկերները դեռևս կոնկրետ չեն, «Ձեռքերը» բանաստեղծության մեջ նա աշխատում է հաղթահարել այդ վերացականությունը։

Հուրյանի բանաստեղծությունները հագեցված են սովետական կյանքի ռոմանտիկայով. այսօրվա հաղթանակի մեջ բանաստեղծը տեսնում է վաղվա գեղեցիկ կյանքի փայլուն հեռանկարը։ Հուրյանի երգերի մեջ ուժեղ է նորի զգացումը, նորը հաստատելու կենսական ձգտումը։ Նրա մոտ նկատվում է ստեղծագործական ընդհանրացումներ կատարելու խիզախ փորձեր, բայց նրա գեղարվեստական պատկերները դեռևս լրիվ չեն դրսևորում առաջավոր իդեաները։

1934 թվին հրատարակվում է Հուրյանի բանաստեղծությունների նոր ժողովածուն «Հատակ» վերնագրով. բանաստեղծն այստեղ հայտաբերում է ստեղծագործական աճման նոր գծեր։ Իր նոր բանաստեղծությունների մեջ Հուրյանը արտացոլում է սովետական կյանքի կոնկրետ փոխհարաբերությունները, ստալինյան առաջին հնգամյակի բնորոշ երևույթները։ Բանաստեղծի հերոսը սովետական երիտասարդն է, սոցիալիզմի կառուցողը, որը աճել և կազմակերպվել է այդ կառուցման պրոցեսում և համակված է սոցիալիստական վառ իգեաներով։ Նա խորապես զգում է իր կատարած գործի կարևոր նշանակությունը, այն, որ նա կառուցում է իր երկիրը նոր կյանք ստեղծելու համար, կառուցում է աշխատավոր մարդկության գալիքը, մեր երկիրն անառիկ ամրոց դարձնելու համար։

Բանաստեղծին ոգևորում է սոցիալիզմի մարտիկի անկոտրուն ոգին՝ թե աշխատանքի ժամին, թե սոցիալիստական երկիրը պաշտպանելիս և թե սոցիալիզմի թշնամիներին ջախջախելիս։ «Երգեր մահվա» բանաստեղծությունների ցիկլի մեջ Հուրյանը արտացոլում է նոր մարդու համար արդեն բնորոշ դարձող հատկանիշներից մեկը, ինչպես աշխատանքի մեջ, այնպես էլ պատերազմի ժամանակ թշնամու դեմ մղած մարտերում հերոսանալու, անմահանալու ձգտում։ «Բորբոքվի թող» բանաստեղծության մեջ պոետը զարգացնում է այն միտքը, որ դժվար թե որևէ ուժ կարողանա ընկճել

«Մեր պայքարատենչ համախոհ ոգին
Եվ պարտությունը մեր կրծքին չոքի...»։

Ժողովածվի բանաստեղծությունների վերջին շարքը կրում է «Ֆրագմենտներ» խորագիրը. բանաստեղծն այստեղ դուրս է գալիս կյանքից ստացած առանձին տպավորությունների վերարտադրման շրջանակներից և փորձում է անդրադառնալ մեր ժողովրդի պատմական անցյալին, գնահատել այն նոր կյանքի բարձունքից, ցույց տալու համար նորի առավելությունը դաժան հնի հանդեպ։

«Հերոսական ֆրագմենտներ» և «Կրեմլ» բանաստեղծությունների մեջ՝ Կրեմլի հերոսական անցյալի նկարագրության միջոցով պոետը փորձում է լուծել ռևոլյուցիայի և ժողովուրդների միջև գոյություն ունեցող փոխհարաբերությունը։

Կրեմլի մեջ նա տեսնում է ռուսական պետականության ուժի մարմնացումը, ռուս ժողովրդի ռևոլյուցիայի ոգին։ Խորապես զգալով ռևոլյուցիայի կատարած գերը ժողովուրդների կյանքում, Հուրյանն այնուամենայնիվ չի կարողանում տիպական գծերով դրսևորել ժողովուրդների անցած ճանապարհը

դեպի ուսուցիան։ Նա մնում է երևույթների նկարագրության արտաքին հատկանիշների բացահայտման սահմաններում։ Բանաստեղծությունների մեջ դրսևորված առաջատար տենդենցները և ստեղծագործական թերությունները իրենց ցայտուն արտահայտությունն են գտել այդ շրջանում գրած նրա պոեմների մեջ։

«Հողի արյունը», «Դնեպր» պոեմները դրսևորում են ստալինյան հնգամյակի հիմնական խնդիրները, կապված նոր մարդու վերափոխման պրոցեսի հետ։

«Հողի արյունը» պոեմը, գրված 1932 թվին, պատկերում է Բաքվի նավթահանքերում կազմակերպվող պայքարը սոցիալիստական ինդուստրիայի լիակատար հաղթանակի համար։ Հուրյանը ցույց է տալիս, որ սոցիալիստական աշխատանքի պրոցեսում մարդկանց հոգեբանության մեջ ձևավորվում և ամրապնդվում է սոցիալիստական գիտակցությունը։

Պոեմն սկսվում է նավթահանքերում բանվորական ժողովի նկարագրությամբ. նախ ներկայացվում է սոցիալիստական կյանքը հաստատող սովետական մարդը։ Նախկին բանվոր, այժմ առաջ քաշված պարտիական աշխատող Սեթոն, բանվորական կոլեկտիվի առաջ հանդես է գալիս, որպես նոր կյանքի առաջավոր դիրքերը նվաճած, սոցիալիստական գիտակցությամբ օժտված մարդ։ Հուրյանը ընդհանուր շտրիխներով գծում է կոլեկտիվի և անհատի ձգտումների ներդաշնակությունը։

Պոեմում նկարագրվում է Բաքվի նավթահանքերից մեկում առաջավոր բանվորների և ինժեներների պայքարը վնասարարական տարրերի դեմ, նավթի արտադրանքի բարձրացման համար։ Երիտասարդ կոմունիստ ինժեներ Էլմանը պայքարում է տեխնիկական հին ինտելիգենցիայի այն ներկայացուցիչների դեմ, որոնք խոչընդոտ են հանդիսանում նորարարության և աշխատանքի սոցիալիստական մեթոդների զարգացմանը։

Բանվոր Սեթոն կազմակերպում է հանքերում նավթի հանույթը բարձրացնելու գործը, ձգտում է կիրառել նոր, ավելի բարձր տեխնիկական նորմաներ, ծավալել սոցիալիստական մրցակցությունը՝ բնությունը հաղթահարելու, դասակարգային թշնամիների ուժերը ջախջախելու համար։

«Հողի արյունը» պոեմը Հուրյանի լավագույն ստեղծագործություններից մեկն է։ Երիտասարդ բանաստեղծը սովետահայ գրականության մեջ առաջիններից էր, որ փորձում է գեղարվեստական պատկերներով ներկայացնել սոցիալիստական արտադրության մեջ ծավալվող և զարգացող նոր հարաբերություններ, պայքարը հնի դեմ և նորի հաղթանակը։

Սակայն իր նկարագրությունների մեջ բանաստեղծը դեռևս լիակատար կերպով չի գտել գեղարվեստական այն միջոցները, որով հնարավոր էր վերարտադրել մեր իրականության մեջ տարվող աննախընթաց պայքարը հնի դեմ։ Գեղարվեստական ընդհանրացումները հանդես չեն գալիս իրար հետ սերտորեն շաղկապված։ Սխեմատիկ են գծված հիմնական կերպարները, այնտեղ, ուր անհրաժեշտ է տիպական գծերը պատկերել գեղարվեստորեն, բանաստեղծը դիմում է կոմենտարների, որոնք չեն օգնում կերպարի բացահայտմանը։ Բացի այդ, պոեմի հիմնական կերպարներն իրենց նոր հատկանիշներով հանդես չեն գալիս որպես աշխատանքային նոր պրոցեսի զարգացման արդյունք։

1933 թվականին հրատարակվում է Հուրյանի «Դնեպր» պոեմը։ Պոեմում նկարագրված է Դոնբասի ածխահատների հերոսական աշխատանքը ածխի նոր պաշարներ գտնելու, սոցիալիստական ինդուստրիան առաջ մղելու համար։

Գյուղից հավաքագրված կոլտնտեսականները գնացքով մեկնում են Դոնբաս, ածխի արդյունաբերության մեջ աշխատելու համար։ Պոեմի առաջին մասում գծագրվում են առանձին կերպարներ՝ հին պարտիզան Զուբան խմբի ղեկավարը, կոմերիտական Զեբոտարը, կուլակաթափ եղած Բոնդարչուկը և ուրիշները։ Բանաստեղծն իր գծած կերպարների մեծ մասի մեջ աշխատում է տեսնել կուլտուրական ռևոլուցիայի ուժով բարձրացած, կառուցող ժողովրդի պատկերը, նրա հերոսականությունը, աշխատանքային էնտուզիազմը։

Այնուհետև պոեմի սյուժեն զարգանում է երկու ուղղությամբ, մեկը՝ Զուբայի բրիգադի աշխատանքային հերոսությունն է, մյուսը՝ Բոնդարչուկի անկման նկարագրությունը։

«Դնեպր» պոեմի մեջ բանաստեղծը ոչ միայն չի զարգացրել առաջին պոեմի ստեղծագործական նվաճումները, հատկապես նոր կերպարի հայտնագործման և զարգացման ուղղությամբ, այլև թույլ է ներկայացրել կամ համարյա չի ներկայացրել դասակարգային հակասությունները և սոցիալիստական նվաճումների համար մղվող պայքարը։ Չնայած դրան, պոեմն ունի մի քանի անժխտելի արժանիքներ։ Նախ՝ այդ մի փորձ է ներկայացնելու Դոնբասի բանվորության հերոսական պայքարը առաջին հնգամյակի տարիներին, քարածուխի արտադրանքի բարձրացման համար։ Երկրորդ՝ որ Հուրյանը ձգտել է արծարծել սովետական գրականության կարևոր թեմաներից մեկը, սոցիալիստական աշխատանքի, սոցմրցման և հարվածայնության հսկայական նշանակությունը՝ սոցիալիզմի կառուցման և մարդկանց հոգեբանության վերափոխման գործում։

Ինչպես «Հողի արյունը» պոեմում, այնպես էլ այստեղ սիմվոլիկ պատկերները, իրականության և բնության երևույթների հիպերբոլիկ համեմատությունները, թուլացնում են իրական կյանքի փաստերի հարուստ ու բազմակողմանի բացահայտման հնարավորությունը։ Պատկերավորման այդ եղանակը, պոետի ուշադրությունը շեղել է աշխատող և ստեղծագործող մարդու հոգեբանությունը նկարագրելու հնարավորությունից։

1932 թ. հրապարակված ժողովածուի մեջ Հուրյանը զետեղել է երեք փոքր պոեմ. «Պոեմ անանուն», «Քնքշության բերդ», «Բոունցքը» վերնագրերով։ Այս պոեմները գերազանցապես լիրիկական են և արտացոլում են բանաստեղծի խոհերը՝ սովետական ժողովրդի պատմական անցյալի նկատմամբ։ Առաջին պոեմի մեջ՝ նկարագրելով Լերմոնտովի ժամանակաշրջանը, պոետը աշխատել է վեր հանել նրա ողբերգության պատճառները։ Պոեմի դրական գիծը մոռայլ անցյալի հակադրությունն է պայծառ ներկային։

«Քնքշության բերդը» պոեմի մեջ բանաստեղծը անցյալի և ներկայի հակադրման միջոցով դրսևորում է մեր օրերի վեհությունը։

Այս մի չեղած երթ է աշխարհի սկզբից,
Որ մասսաներն են տերը իրենց վաստակի,
Ով կարող է նրա թռիչքները զսպի
Եվ ծանրանա նրա կուռ դաստակին։

«Բոունցքը» պոեմի մեջ բանաստեղծը ավելի ցայտուն է ընդգծում անցյալի և ներկայի միջև եղած խորը տարբերությունը. պոետը փառաբանում

է նոր կյանքը, որը սկիզբ դրեց հասարակ մարդկանց անօրինակ հերոսության։

Ամփոփելով Թ. Հուրյանի ստեղծագործության առաջին շրջանը, որպես եզրակացություն կարելի է ասել, որ սոցիալիզմի հաղթանակի և նրա զարգացման առաջին տարիներին Թ. Հուրյանն առաջիններից մեկն էր, որ սովետահայ գրականության մեջ բարձրացրեց սոցիալիստական աշխատանքի թեման, օրգանապես շաղկապված սովետական հայրենասիրության հետ։

Հուրյանի այդ շրջանի ստեղծագործության համար բնորոշ է իրականության ճշմարտացի վերարտադրման գեղարվեստական ձևերի որոնման և նրա բացահայտման տենդենցը։ Իր ստեղծագործության մեջ նա դրսևորում է բազմազան ազդեցություններ, որոնք այս դեպքում նրա մոտ հանդես են գալիս ոչ թե որպես օրգանական երևույթ, այլ որպես գրական որոնումների արգասիք։ Բանաստեղծի համար դեռևս պարզ չէին սոցիալիստական ռեալիզմի սկզբունքները. սեփական սխալների և խոտորումների քննադատության ճանապարհով նա իր ստեղծագործության մեջ խորացնում էր հինը հաղթահարելու և նորը հաստատելու, նրա զարգացման պրոցեսը ներկայացնելու ձգտումը։

Հուրյանի ստեղծագործության համար վճռական նշանակություն է ունեցել Մայակովսկու գաղափարական ազդեցությունը և նրա արվեստի արտահայտչական ձևերը։ Դա նկատվում է Հուրյանի այդ շրջանի ստեղծագործության ոճի, թափի, պաֆոսի մեջ, նրա համարձակ ընդհանրացումների, պատկերների, էպիտետների և մետաֆորների մեջ։ Հուրյանի «Մոնումենտը» և «Ես երազում եմ» բանաստեղծությունները Մայակովսկու տաղանդի փառաբանություններն են։ Մի շարք բանաստեղծությունների մեջ եղած քննադատական վերաբերմունքը, մանր բուրժուական հոգեբանության, կյանքից կտրվածության, սուբեկտիվ անկումային տրամադրությունների նկատմամբ, կրում են Մայակովսկու քննադատական ոգին։ Այդպիսին են Հուրյանի «Մահեր», «Ծրաշխավորություն», «Փրկություն» և այլ բանաստեղծությունները, որոնք դրված են անմիջապես մեծ բանաստեղծի ազդեցությամբ։

Այդ շրջանի ստեղծագործությունների մեջ Հուրյանը փորձում է իրականությունը ցույց տալ իր բազմազան ձևերի մեջ։ Նրա համար բնորոշ է լիրիկո-էպիկական ժանրը, որը արտահայտվում է թե նրա բանաստեղծությունների և թե պոեմների մեջ։

Այդ ժանրը իր զարգացումն է գտնում Հուրյանի ստեղծագործության երկրորդ շրջանում, հատկապես պոեմների մեջ։

Այդ շրջանի հիմնական թեման պատմական անցյալի հերոսական դրվագների նկարագրությունն է. բանաստեղծն այստեղ գտնում է գեղարվեստական արտացոլման ճշմարտացի մեթոդը, սոցիալիստական ռեալիզմը, դուրս գալով վերացական խորհրդածությունների ոլորտից, նա փորձում է պատմական երևույթներն ընդգրկել ավելի կոնկրետ ձևերի մեջ։ Բանաստեղծն իր առջև խնդիր է դնում, բացահայտել ազատության, հայրենիքի համար ընկած հերոսների նվիրվածությունը, սերը, անձնազոհությունը։

1941 թվին հրապարակած պոեմների ժողովածուն ընդգրկում է Ստալինյան Կոնստիտուցիայի հաստատման և կենսագործման շրջանում Հուրյանի գրած մեծ և փոքր պոեմները։ Այդ շրջանին է պատկանում նաև նրա «Ֆրիկ» դրամատիկական պոեմը։

«Հողը» պոեմի մեջ Հուրյանը գծագրում է զինվորի շինել հագած գյուղացու քաղաքական ինքնագիտակցության զարգացման նոր աստիճանը, երբ նա համոզվել է արդեն, որ հողը չի նվաճվի խնդրանքով, որ այն պետք է ձեռք բերվի ռևոլուցիոն պայքարի ուղիով։

«Սոճիների պուրակում» և «Մեքենավարը» պոեմների մեջ բանաստեղծը նկարագրում է քաղաքացիական կռիվների շրջանում դաշնակցական ավանտյուրիստների կատարած ոճրագործությունները, պատկերում է մասսաների ռևոլուցիոն ինքնագիտակցության աճը, որը ոտքի է հանում հայ ժողովրդին դաշնակների դեմ։

«Սոճիների պուրակում» պոեմի մեջ զինվորները իրենց բուռն ցասումն են արտահայտում դաշնակցական բանդիտների դեմ, որոնք պատանի ռևոլուցիոներին նետում են շոգեկաթսայի մեջ։ Մեքենավարը վրեժ է լուծում բանդիտներից, խորտակում է գնացքը և ինքն էլ զոհվում նրա հետ։ Այս պոեմն իր գաղափարական հագեցվածությամբ, արվեստով, ռևոլուցիոն պաթոսով և ջերմությամբ առանձին տեղ է գրավում Հուրյանի ստեղծագործության մեջ։ Բանաստեղծին հաջողվել է կերտել ռևոլուցիոն մարտիկի, մեքենավարի կերպարը, որի բնորոշ գծերն են մարդկային մեծ հումանիզմը, ռևոլուցիոն պաթոսը, բուռն ատելությունը թշնամու նկատմամբ և վառ հավատը ապագայի նկատմամբ։

Վերոհիշյալ ժողովածուում զետեղված «Սայաթ-Նովա» պոեմը իր բնույթով և կերպարի բացահայտման նոր եղանակներով տարբերվում է մյուս պոեմներից։

Պոեմը բաղկացած է 4 մասից. առաջին մասում հեղինակը ընդհանուր գծերով պատկերում է եկեղեցու և կղերական դաստիարակության խեղդող միջավայրից փախչող պատանու խոհերն ու ապրումները բնության գրկում։ Ռոմանտիկական պաթոսով բանաստեղծը նկարագրում է պատանի Սայաթ-Նովայի հոգում բնության ուժով ներդաշնակված երգի ծնունդը։ Հաջորդ գլխում գեղարվեստական սքանչելի տողերով հեղինակը նկարագրում է ձկնորսների քեֆը Քոռ ափին, որին մասնակցում է Սայաթ-Նովան, նվագում ու երգում է նա իր հորինած երգերը բնության, սիրո, մարդու ու աշխարհի մասին։ Երրորդ գլխի մեջ Սայաթ-Նովան հանդես է գալիս Հերակլ 2-րդի պալատում, որտեղ նա ենթարկվում է հալածանքի։ Այնուհետև նկարագրվում է Աղա-Մահմեդ Կաջարի հրոսակախմբերի ավերածությունները Անդրկովկասում։ Սայաթ-Նովան իրեն նետում է զանգակատնից, վերջ տալիս իր կյանքին։

Լիրիկական ջերմ պաթոսով կերտված այս պոեմն ունի գաղափարական և գեղարվեստական արժեք։ Ընդհանուր գծերով վերարտադրելով անմահ երգչի ապրած պատմական ժամանակաշրջանը, հեղինակը ցանկացել է ցույց տալ բռնության և խավարի դեմ ըմբոստացող բանաստեղծի կերպարը, որը ատելությամբ լցված պալատականներին ու աղնվականներին ուղղում է իր ցասումնալից խոսքերը, որ

«Ռամիկ եմ, իշխան դառնալ չեմ ուզում»։

Սայաթ-Նովան ընդվզում է ճորտատիրության դեմ, նա չի համակերպվում ֆեոդալական հասարակության ստեղծած օրենքներին. նա ջատագովում է լուսավորությունը, գիրը, գրականությունը։

Հուրյանը աշխատել է գտնել Սայաթ-Նովայի պատմական հասարակական կերպարի բնորոշ գծերը։

Դիտելով անցյալը, նոր հաղթանակած կյանքի բարձունքից, բանաստեղծն իր զգացումներն ու ապրումները կապում է պատմական տվյալ ժամանակաշրջանի կոնկրետ դեպքերի և երևույթների հետ։ Նա մեկ նկարագրում է պատմական էպոխան, Սայաթ-Նովայի հետ կապված դեպքերը, մեկ դիմում է իր ներկայացրած պատմական օբեկտներին և աշխատում է իր ունեցած տպավորություններով հաստատել պատմական առաջընթացի ճշմարտացիությունը։ Օրինակ, 4-րդ գլուխը նա սկսում է դիմելով Կովկասի լեռներին.

Տարիներ անցան հողմերի նման
Կովկաս, քո ճերմակ գլխի վրայից,
Քեզ բուքը թակեց ու շիթերը ձյան
Խարազանեցին երկնային գահից։

Այս նկարագրությամբ բանաստեղծը նախապատրաստում է պատմական ծանր ու դաժան դեպքերի վերարտադրությունը, դեպքեր, որոնք իրենց հետևանքներով նմանվեցին Կովկասյան լեռնաշխարհի բնության տարերքին։ Բայց միաժամանակ Հուրյանը Կովկաս լեռնաշխարհի մեջ տեսնում է այն սիմվոլիկ ուժը, որը համախմբել է ժողովուրդներին՝ ընդդեմ բռնակալության։

Հուրյանը Սայաթ-Նովայի քնարի մեջ տեսել է նրա անաղարտ զգացումները, անհուն սերը բնության հանդեպ, կյանքի ընկալման լայն և խորը զգացողությունը։ Պոեմի մեջ միաժամանակ բացահայտվում է Հուրյանի սեփական խորհրդածությունները՝ արվեստի, գրականության և կյանքի բազմազան երևույթների մասին։

Թ. Հուրյանի վերջին ստեղծագործություններից է «Ֆրիկ» դրամատիկական պոեմը։

Ֆրիկը հայկական վերածնության խոշորագույն դեմքերից մեկն է. հեղինակը ցանկացել է նրա մեջ տեսնել օտար լծի դեմ ըմբոստացող և մաքառող մեծ հայրենասերի և միաժամանակ վերածնության շրջանի ականավոր քերթողի կերպարը։ Դրամատիկական գործողությունը սկսվում է Ֆրիկի ընտանեկան դրամայով։ Հարկի փոխարեն տանում են Ֆրիկի որդուն, մայրը՝ Ծովինարը չդիմանալով այդ ծանր հարվածին, խելագարվում է։ Ֆրիկի անձնական տրագեդիան զուգորդում է սոցիալական անարդարությունների հետևանքով հայ ժողովրդի համար ստեղծված հասարակական տրագեդիայի հետ։ Հուրյանը կերտում է բռնակալական կարգերի դեմ ըմբոստացող Ֆրիկի հոյակապ կերպարը։ Ֆրիկը հանդես է գալիս մոնղոլական լծի դեմ, կոչ է անում խաչի տեղ վերցնել սուրը և պայքարել հայրենիքի անկախության համար։ Օտարերկրյա բռնակալների կամայականությունների հետ միասին, պոեմում բացահայտվում են երկրի ներսում եղած սոցիալական հակասությունները։ Ֆեոդալական իշխանության ներկայացուցիչները և հայ եկեղեցին հանդես են գալիս իրենց կամայականություններով ու բռնություններով։

Ֆրիկի բողոքը եկեղեցական անօրենությունների, չարաշահումների դեմ, արժանանում է կղերականության հալածանքին։ Իր քննադատության մեջ Ֆրիկը հանդում է աթեիստական եզրակացությունների։

Պատմությունը Ֆրիկի մասին կենսագրական քիչ տվյալներ է թողել մեզ։ Հուրյանը իր ստեղծագործական երևակայությամբ ստեղծում է հավանական դեպքեր, ընդհանրացումներ, տարբեր իրադրություններ, որոնց մեջ հասկա-

նալի են դառնում Ֆրիկի ըմբոստացումը, քննադատությունը, նրա արտահայտած դեմոկրատական, հումանիստական, հայրենասիրական հայացքները։

Այդպիսի հավանական մոմենտներից մեկն է Ֆրիկի և Կոստանդին Երզնկացու հանդիպումը։ Հուրյանը աշխատել է բնութագրել նաև Երզնկացու հասարակական մտածողության բնորոշ գծերը, որին հանդիպում ենք մենք սիրային և բնության երգերի մեջ։

«Ֆրիկ» դրամատիկական պոեմի մեջ Հուրյանը աչքի է ընկնում հերոսների բնավորությունները ստեղծագործական բարձր պաֆոսով կերտելու կարողությամբ։ Կերպարների միջոցով նա դրսևորում է պատմական իրականությունը։ Լավ է գրված Ֆրիկի կոչը Կոստանդին Երզնկացուն, նրա անձնական խոհերը և այլն։ Ուշագրավ կերպար է Ծաղկող Հովնանը։

* * *

Այդ շրջանի համար բնորոշ են նաև նրա այն բանաստեղծությունները, որոնք հրատարակվել են «Աստղ» ժողովածուում, 1943 թվականին։ Գրքում այդ բանաստեղծությունները զետեղված են «Նախազգացում» և «Հայրենի երկիր» բաժիններում։ Բանաստեղծությունների այդ շարքի բնորոշ գիծը կրկին հայրենասիրությունն է։ «Նախազգացում» բաժինը անմիջապես կապվում է Հայրենական պատերազմի հետ։

Հուրյանը նկարագրում է մեծ առաջնորդի կյանքի առանձին դրվագները։ «Մետեխ» բանաստեղծության մեջ նա արտացոլում է ընկեր Ստալինի ռևոլուցիոն գործունեությունը, նրա բոլշևիկյան անխորտակելի կամքը, որով նա հաղթում է բոլոր դժվարությունները։

Որով նա հպարտ քայլում էր միշտ
Կուռ շղթաների, սրերի միջով,
Ոլորտը բարձր, ճակատը անվիշտ
Հայացքով կրակ ու անզիջող։

«Գորիում» բանաստեղծության մեջ արտահայտվում է բանաստեղծի ջերմ զգացումները առաջնորդի մանկության և նրա ծննդավայրի նկատմամբ։ Առաջնորդի և նրա զինակիցների սխրագործությունների նկարագրությունը տվյալ շրջանում, ուներ իր կոնկրետ նպատակը, նրանց կյանքի նկարագրության միջոցով վեր հանել մեր պարտիայի ռևոլուցիոն տրադիցիաները, նրա պայքարի անսպառ ուժերը և թշնամուն ջախջախելու մեծ հավատը։

Նույն գրքում զետեղված տրիոլետների մեջ բանաստեղծը արտացոլում է իր խոհերն ու զգացումները սովետական մարդու նկատմամբ։ Բանաստեղծի ստեղծագործության բնորոշ գիծը մարտական տրամադրությունն է, օպտիմիզմը։ Այդ ճիշտ հայացքը բանաստեղծին հնարավորություն է տալիս ներկայացնելու կոնկրետ իրականության պատկերը, մեր հայրենիքին սպառնացող պատերազմի վտանգը.

Ուր էլ լինես իմ ընկեր, դու վառոդը շոր պահի,
Աչքդ արթուն, սիրտդ բաց, խնդությունդ անաղի,
Խտանում են ամպերը, պատերազմի ու մահի
Եվ ուր որ է՝ երկինքը շուտով անձրև կմաղի։

Հաջորդ քառյակների մեջ բանաստեղծը բացահայտում է սովետական քաղաքացու վեհությունը, նրա պայքարի ճշմարտացիությունը՝ «Հանուն մարդու խնդության, արդարության ու հացի»։

Բանաստեղծը ինքը զինված է մարտական տրամադրությամբ։ Նա ներշնչված է նոր երգերով, հաղթանակների նոր հեռանկարներով.

Ոգի, ոգի ներշնչիր քո երգերին բանաստեղծ,
Ու երգերով մարտ գնա ու հավատով մարտ գնա,
Որ հայրենի փառքը քո հպարտ ու վեհ միշտ մնա,
Ոգի, ոգի ներշնչիր քո երգերին բանաստեղծ։

Նախապատերազմյան շրջանի երգերի մեջ հետաքրքիր են հայրենիքին նվիրված բանաստեղծությունները։ Վեհապանծ Արարատը բանաստեղծի հոգին լցնում է անսահման թովչանքով հայրենի բնության գեղեցկության հանդեպ։ Բանաստեղծը հիացած է նոր, սովետական հայրենիքով։ «Հուշ» բանաստեղծության մեջ նա դրում է.

Ոնց չքացան այդ բոլորը անդարձ անցան,
Եվ տնակը մեր ազատվեց արհավիրքից,
Պայծառ լինի հիշատակդ պայծառ, պայծառ,
Ազատարար գու մեր հացի, հողի, կյանքի։

Այդ շրջանի երգերի մեջ ամենալավագույն բանաստեղծությունն է «Աստղը». պոետը նկարագրում է Կրեմլը, նրա գլխին ճառագող աստղը, որպես Ստալինյան Կոնստիտուցիայի շնորհիվ աճած ժողովուրդների քաղաքական միասնության սիմվոլ, սովետական յուրաքանչյուր քաղաքացու հայրենասիրական հպարտության սիմվոլը։

Միլիոնների աստղ գու
Վառվիր, հուրհրա
Երջանկություն գու մարդու,
Դու ցնծության ջահ։

Այդ բանաստեղծության մեջ արտահայտված է սովետական քաղաքացու գիտակցության բարձր աստիճանը, կոմունիստական գիտակցությունը, որը նրան տալիս է պայքարի, սխրագործության, հաղթանակի հզոր ուժ։

1941 թվականին սկսվեց Հայրենական պատերազմը։ Սովետական ժողովուրդը ոտքի կանգնեց պաշտպանելու իր անկախությունը, իր հայրենիքը և իր պետությունը։ Թաթուլ Հուրյանը դարձավ Հայրենիքի զինվոր և իր ընկերների հետ կանգնեց Սևաստոպոլի պատերի տակ, պաշտպանելու իր հայրենի երկիրը ֆաշիստական հորդաներից։ Սևաստոպոլյան բանաստեղծությունների շարքը նրա ստեղծագործության պսակն է կազմում։ Ռազմաճակատում թնդանոթների որոտի տակ, նա նռնակներ էր նետում տանկերի դեմ և երգեր հորինում Հայրենական մեծ պատերազմի հաղթանակի մասին։

«Սևաստոպոլ» բանաստեղծության մեջ նա նկարագրում է Սովետական Միության հզոր քաղաքներից մեկը, որն իր անօրինակ պաշտպանությամբ հերոս քաղաքի անունը շահեց։

Քաղա՞ք, փառքի, սիրո, քաղաք հեքիաթական
Բախումների հանդեպ անպարտ ու անզիջում,
Քո փեշերին ահա հազարները ընկան,
Թշնամին է խեղդվում իր իսկ արյան լճում։

Բանաստեղծը խորը հավատով է լցված սովետական ժողովրդի ուժի և նրա հաղթանակի հանդեպ։ 1942 թ. գրած «Մենկևեզյան լեռներ» բանաստեղծության մեջ նա դիմում է իր ընկերներին, արիության, հաղթանակի կամք ներշնչում նրանց։

Պատերազմի ծուխն է մեր ճակատը փակել,
Բայց կժպտան նորից կատարները ձեր վեհ,
Դու հավատով լեցուն մարտնչիր իմ ընկեր,
Վաղը կը պարուրի հաղթության լույսը քեզ։

Մի քանի բանաստեղծությունների մեջ Հուրյանը նկարագրում է պատերազմական առանձին դրվագներ։ Այդ գործերի մեջ հանդես են գալիս նրա հոգեկան վսեմ հատկանիշները, Հայրենիքի հանդեպ ունեցած անհուն սերը, ատելությունը և ցասումը թշնամիների դեմ։

Իր կյանքի վերջին օրերին գրած բանաստեղծությունները լցված են հաղթանակի կենսական խորը զգացումներով։

1942 թ. հունիսի 18-ին հիվանդանոցից ռազմաճակատ մեկնելու առիթով Հուրյանը գրում է իր «Վերադարձ» բանաստեղծությունը։

Վերադարձա ձեզ մոտ, կովենք, իմ ընկերնե՛ր,
Կրծքներս դեմ տված չարիքին աշխարհի,
Լավ է երգը շուրթին ոտքի վրա մեռնել,
Քան ապրել շղթայված, որպես ճորտ ու գերի։

Բանաստեղծությունն ինքնաբուխ է, անկեղծ, գրված ջերմ պաթոսով և հաղթանակի հավատով։

1942 թվականի հունիսի 19-ին Հուրյանը գրում է իր վերջին բանաստեղծությունը, որը արտահայտում է մահվան գնով թշնամուն հետ մղելու, հայրենիքի կյանքի համար սեփական կյանքը զոհելու պատրաստակամությունը։ Խորը հայրենասիրությունը ստեղծում է խոր արհամարհանք դեպի մահը։ Սովետական Բանակի մարտիկների այդ զգացումը պարզորեն արտահայտել է պոետը հետևյալ տողերում.

Մահը նայում է անզոր, զարմացած,
Մահը սարսափած հեռուն է գնում,
Եվ հերոսությունն ինքը ցած իջած
Նրանց ճակատին պսակ է դնում։

Հերոսությունը պսակ դրեց և իրեն՝ բանաստեղծ Հուրյանի ճակատին։ Երեք օր անց նա ընկավ մարտի դաշտում, որպես հայրենիքի անձնազոհ մարտիկ։

Իր նամակներից մեկում նա գրում է իր ընկերներին. «Երբ վաղը ես չլինեմ, խնդրում եմ, երբ մեծանան իմ մանուկները, ասացեք նրանց, որ Թ. Հուրյանը աշխարհում մի բան էր ամենից շատ սիրում, դա իր հայրենիքն է, որին զոհեց և իր կյանքը»։

* * *

Հուրյանի բանաստեղծությունները լիրիկական են և էմոցիոնալ։ Գեղարվեստական պատկերների միջոցով նրանք արտահայտում են բանաստեղծի մտածողության նոր որակը, նրա քաղաքական տենդենցը։ Հուրյանը քաղաքական լիրիկայի լավագույն արտահայտիչներից մեկն է սովետահայ պոեզիայում, մի բանաստեղծ, որի մոտ անհատական թեման դրսևորվում է որպես հասարակական թեմա և այդ անձնականը իր կենսունակությունը գտնում է միայն սովետական կյանքի հետ ունեցած օրգանական կապի մեջ։

Р. Нанумян

Татул Гурян

Татул Гурян является одним из талантливых поэтов, выросших в дни сталинских пятилеток.

В большинстве своих поэм и стихов он отражает интеллектуальный и духовный рост советской молодежи.

Гурян глубоко эмоциональный поэт. На поэтическое творчество Гуряна особое влияние оказали творческие традиции русской советской поэзии. В ряде его поэм „Машинист", „В сосновой роще", „Кровь земли", „Днепр" и др. отражены отличительные черты характера советского человека. В поэмах „Фрик" и „Саят-Нова" Гурян старается в высоко-художественных образах передать борьбу народов против реакции и насилия, во имя гуманизма и победы свободолюбивых идей.

Поэмы Гуряна преисполнены пламенным оптимизмом и глубокой верой в победу советского народа. Татул Гурян погиб героической смертью при защите Севастополя в июне 1942 г.